



Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարար



Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԶԵՌԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) մասին» N314 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման)» կարգի (այսուհետ՝ կարգ) 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) առաքող կամ տրամադրող (այսուհետ՝ առաքող) կամ տեղափոխող և կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության պահանջներին բավարարող կազմակերպությունները հաշվապահական հաշվառման, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ եկամուտների և դրանց հետ կապված ծախսերի հաշվառման գործող կարգին զուգընթաց, շարժական (նյութական) գույք հանդիսացող արտադրանքի, (ապրանքների) առաքման կամ տեղափոխման դեպքում պարտավոր են նույն կարգին համապատասխան վարել դրանց հաշվառումը՝ գրանցումներ կատարելով առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքերում (այսուհետ՝ առաքումների գրանցման գիրք):

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ առաքումների գրանցման գրքում չեն գրանցվում, մասնավորապես, պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների տեղափոխումը:

Կարգի 3-րդ կետի 4-րդ պարբերության համաձայն՝ առաքումների և (կամ) տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով առաքումների գրանցման գրքի կազմի վրա)) համար (պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստ, այլ մատակարարման վայրեր) վարվում է առանձին առաքումների գրանցման գիրք:

Կարգի 5-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից առաքումների գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են իրենց կողմից առաքվող կամ իրենց մոտից տեղափոխվող ամբողջ արտադրանքը և ապրանքները (այսուհետ՝ ապրանք)՝ բացառությամբ կարգի 2-րդ կետ 2-րդ մասում նշվածների:

Կարգի 5-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ առաքվող ապրանքը ներառում է տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտներին իրացնելու համար նախատեսված ապրանքը (այդ թվում՝ կոմիսիոն վաճառքի ձևով և այլն), իրացման համար չնախատեսված ապրանքների (պատրաստի արտադրանքի) տրամադրումը (հատկացումը, բացթողումը, այլ ձևով օտարումը, այդ թվում՝ անհատույց): Առաքվող ապրանք է համարվում նաև առևտրական կետից տնտեսավարող սուբյեկտներին իրացվող (վաճառվող, տրամադրվող) ապրանքը:

Կարգի 5-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն՝ տեղափոխվող ապրանքը ներառում է տնտեսական տեղաշարժերի ենթարկվող (պատրաստի արտադրանքի՝ պահեստից կամ այլ վայրերից ֆիրմային խանութ, պահեստից վաճառքի կետ կամ այլ վայր (պահեստ և այլն) տեղափոխվող) ապրանքը (պատրաստի արտադրանքը), ինչպես նաև մաքսատուն կամ մաքսային կետ տեղափոխվող կամ ի պահ հանձնվող ապրանքը:

Առկա իրավիճակում տարաբնույթ են ընկալվում նույն հասցեի տարածքում մի քանի առաքման կետերի դեպքում առաքումների գրանցման առանձին գրքերի

վարման, ինչպես նաև առաքման կետում ֆիզիկապես չտեղավորվող հիմնական միջոցների առաքումների գրանցման հարցերը:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը տրվում է իրավական ակտի պաշտոնական մեկնաբանման համար նախատեսված կանոններով, իսկ նշված օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Հաշվի առնելով վերը նշվածը, պաշտոնապես պարզաբանում եմ.

1. տնտեսավարող սուբյեկտը առաքումների և (կամ) տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի առանձին կետի՝ պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստի կամ այլ մատակարարման վայրի համար պարտավոր է վարել առաքումների գրանցման առանձին գիրք,

2. առաքումների գրանցման գրքերում տնտեսավարող սուբյեկտի կողմից գրանցում (հաշվառում) չի կատարվում կարգի 2-րդ կետի 2-րդ մասով սահմանված դեպքերում,

3. տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է իր կողմից այլ տնտեսավարող սուբյեկտներին իրացվող, տրամադրվող (հատկացվող, բացթողնվող, այլ ձևով օտարվող, այդ թվում՝ անհատույց) շարժական գույք հանդիսացող ապրանքի (այդ թվում՝ հիմնական միջոցի) առաքումը Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) մասին» N314 որոշմամբ հաստատված կարգով գրանցել (հաշվառել) նույն հասցեի առանձին կետի՝ պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստի կամ այլ մատակարարման վայրի համար վարվող առաքումների գրանցման գրքում: Տնտեսավարող սուբյեկտի հիմնական միջոցների առաքման վայրը համարվում է առաքումների իրականացման առանձին վայր, որի համար գրանցումները պետք է կատարվեն առաքումների գրանցման առանձին գրքում: